10.56653/18290361-2025.15-08

Դավիթ Պողոսյան
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն
d.poghosyan.historymuseum@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ. ՈՒՐՎԱԳԾԵՐ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՄԵԿԴԱՐՅԱ ՆՎԻՐՈՒՄԻ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, ազգային թանգարան, Երվանդ Լալայան, Կարո Ղաֆադարյան, ցուցադրություններ, հավաքածուներ, թանգարանային գործ

Ազգային թանգարանի հիմնադրումը և տարանջատումը

Հայաստանի պատմության թանգարանի հիմնադրումը հայկական պետականության ամենակարևոր ձեռքբերումներից էր՝ ծնված հայ մտավորականության երկարատև նվիրական երազանքներից ու ջանադիր գործունեությունից: Հայաստանի առաջին հանրապետության կարճատև գոյության տարիներին, 1919 թ. սեպտեմբերի 9-ի պառլամենտական որոշմամբ մայրաքաղաք Երևանի կենտրոնում նպատակ դրվեց հավաքել տասնամյակներ շարունակ տարբեր հայաբնակ քաղաքներում ձևավորված, հաճախ վտանգված, հայ ժողովրդին պատկանող թանգարանային հավաքածուները (Սիմոնյան 1991, 53–64): Թանգարանի ստեղծման որոշումը բխում էր նորաստեղծ անկախ պետության շուրջը աշխարհասփյուռ հայության համախմբման, մայրաքաղաքի սրտում ազգային պետականության կարևոր տարրերից մեկի՝ ազգային թանգարանի ստեղծման ու ինքնատիպ մշակութային ժառանգության պահպանման ու ներկայացման քաղաքականության իրականացման խնդիրներից: Երևանի արական գիմնազիայի շենքը (նկ. 4) նախանշվեց «Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարանի» ստեղծման վայր, որի գործունեության հիմքն էին համարվելու Թիֆլիսում գործող «Հայոց ազգագրական ընկերութեան» թանգարանի հավաքածուն և գույքը (Օրենք՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան հիմնելու մասին 1919) (նկ. 2), ինչպես նաև «Կովկասյան թանգարանի» հայկական հավաքածուները: Թանգարանի առաջին վարիչ նշանակվեց ազգագրագետ, բանահավաք Երվանդ Լալայանը (1864–1931 թթ., նկ. 1), որը սկսեց ակտիվորեն աշխատել իր իսկ կողմից հիմնադրված «Հայոց ազգագրական ընկերության» թանգարանի հավաքածուները, գրադարանը Երևան բերելու և նորաստեղծ «ազգային թանգարանի» անդրանիկ հավաքածուն ձևավո-

* Ստացվել է 04.03.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 05.03.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

րելու ուղղությամբ: Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը ձևավորվող թանգարանի համար գնեց 1919 թ. նույն արական գիմնազիայում կազմակերպված հայ արվեստագետների ցուցահանդեսի գեղարվեստական գործերից (Շահինյան 1919, 2; Օրենք՝ ապագա ազգային թանգարանի համար գեղարվեստական իրեր ձեռք բերելու նպատակով 1919): Սակայն, դժվարին ռազմաքաղաքական իրադրության մեջ հայտնված հանրապետությունը չկարողացավ իրագործել ինչպես ազգային թանգարանի կայացման, այնպես էլ համազգային նշանակության այլ կարևոր նախաձեռնություններ:

1920-ական թթ. խորհրդահայ իշխանությունները կարողացան այլ գաղափարական հենքի վրա իրականացնել Հայաստանի առաջին հանրապետության տարիներին սկսված շատ հայանպաստ ծրագրեր, որոնցից մեկն էլ ազգային թանգարանի հիմնադրման աշխատանքների շարունակումն էր, և որին իրենց մեծ նպաստը բերեցին այնպիսի անվանի մտավորականներ, ինչպիսիք էին Մարտիրոս Սարյանը (1880–1972 թթ., նկ. 3), Աշխարհբեկ Քալանթարը (1884–1942 թթ.), Երվանդ Լալայանը (1864–1931 թթ.), Երվանդ Շահազիզը (1856–1951 թթ.) և այլք, որոնք Թիֆլիսից, Մոսկվայից, Նոր Նախիջևանից, Վաղարշապատից, Անիից և այլ վայրերից կարողացան «կուլտուրայի տան» վերածված նախկին «արական գիմնազիայի» շենքի մի հատվածում հավաքել տարբեր տարիներին ստեղծված հայկական թանգարանային բազմաբնույթ հավաքածուներ և կազմակերպել «ազգային թանգարան» (նկ. 5), որը 1921 թվականից արդեն ընդունում էր այցելուներ և 1922 թ. պաշտոնապես անվանակոչվեց «Հայաստանի պետական կենտրոնական թանգարան» և այդ տարիներին նույնիսկ անվճար մուտք էր ապահովում ազգագրական, հնագիտական, գեղարվեստական և պատմագրական հիմնական չորս բաժինների հավաքածուների դիտման համար (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 53, 1–16):

Թանգարանը դեռ 1920–30-ական թթ. դարձավ Հայաստանում հնագիտական, ազգագրական և ընդհանրապես պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունների զարգացման հիմնական կենտրոններից մեկը: Թանգարանում էին աշխատում Երվանդ Լալայանը, Երվանդ Շահազիզը, Ռուբեն Դրամբյանը, Ստեփան Լիսիցյանը, Եվգենի Բայբուրդյանը, Թորոս Թորամանյանը, Հակոբ Զորյանը և այլ մեծանուն գիտնականներ: Սկիզբ դրվեց հավաքածուների համակարգված համալրմանը, և ցուցադրական աշխատանքների խնդիրներից ելնելով՝ իրականացվեցին առաջին ազգագրական գիտարշավները, հնագիտական պեղումները և այլն (Ղաֆադարյան 1974, 38–47) (նկ. 6):

Սակայն, 1930-ական թթ. խորհրդային բռնաճնշումների և վերափոխումների քաղաքականության շրջանում թանգարանը ևս տուժեց: Մի շարք նվիրյալ թանգարանային գործիչներ, 1935 թ. թանգարանի տնօրեն նշանակված պատմաբան, փիլիսոփա Հակոբ Զորյանը (1894–1942 թթ., կից տե՛ս թանգարանի ղեկավարների ցանկը) զոհ գնացին բռնաճշումներին, իրականացվեց հավաքածուների, այսպես կոչված, «զտում»: Վերանվանված «Կուլտուր-պատմական թանգարանը» 1935 թ. նույն կառույցի ներսում բաժանվեց մի քանի թանգարանների, սակայն չլուծվեց և ոչ մեկի շենքային ու հավաքածուների պահպանման համար անհրաժեշտ պայմանները՝ հետագայում ևս առաջացնելով դրանց զարգացման համար լուրջ հիմ-

նախնդիրներ: 1935 թվականից Հայաստանի պատմության թանգարանը շարունակեց գործել «Ազգային թանգարանի» հնագիտության և ազգագրության բաժինների հիմքով (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 42, 1–2), որը խորհրդային տարիներին հիմնականում հանդես էր գալիս «Հայաստանի պատմության պետական թանգարան» անվամբ:

Հայաստանի պատմության թանգարանի կայացումը՝ որպես գիտամշակութային կառույց 1940–1960-ական թթ.

Հայաստանի պատմության թանգարանը 1940-ական թթ. շարունակեց գործել նախկին արական գիմնազիայի շենքում՝ զարգացնելով իր գիտահետազոտական, գիտահավաքչական, ցուցադրական և հանրահռչակման աշխատանքները, ժամանակի ընթացքում համալրելով իր հավաքածուները Հայաստանում իրականացված մեծածավալ հնագիտական պեղումներից, ազգագրական դաշտային ուսումնասիրություններից, նվիրատվություններից, գնումներից: 1940–1960-ական թթ. թանգարանն ընդգրկված էր գիտությունների ակադեմիայի կառավարման համակարգում և իր արշավախմբով շարունակական պեղումներ էր կատարում Հայաստանի հին և միջնադարյան պատմության համար կարևոր հնագիտական հուշարձաններում (Ղաֆադարյան 1948, 37–64): Թանգարանի կողմից ազգագրական դաշտային ուսումնասիրություններ կատարվեցին նաև Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ վայրերում: Ժամանակագրական սկզբունքով կազմակերպվեց հայ ժողովրդի պատմության ամբողջական մշտական ցուցադրությունը՝ (Ղաֆադարյան 1961) զուգահեռ մեծածավալ ժամանակավոր ցուցահանդեսներին, որոնցից խորհրդանշական էր «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված ցուցադրությունը 1939–1940 թթ. (նկ. 7):

Թանգարանի զարգացման գործում մեծ ավանդ ունեցավ ավելի քան երկու տասնամյակ այն ղեկավարող, բազմավաստակ գիտնական Կարո Ղաֆադարյանը (1907–1976 թթ., նկ. 8), որը հիմնական գիտական բաժիններին զուգահեռ զարգացրեց վերականգնման, լուսանկարահանման, հրատարակչական, պահպանման, գիտակրթական գործունեությունը (նկ. 10–11): Թանգարանը մեթոդական կենտրոնի վերածվեց Հայաստանի այլ թանգարանների ստեղծման և զարգացման համար (ՀՊԹ արխիվ, ֆ. 1., ց. 1, գ. 214; 216, 218; 220; 222; 227; 231; 234; 241; 244; 249; 255; 258; 261; 264; 268; 271; 275; 278): Հիմնվեց թանգարանի գիտական պարբերականը, որը 1948 թվականից հրատարակվում էր «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի» խորագրով (Ղաֆադարյան 1948, 5–7; Պողոսյան 2021, 9–12): 1950-ական թթ. ներկայիս Հանրապետության հրապարակի կողմից բացվեց թանգարանի հիմնական մուտքը՝ նոր կամարաշար հարկաբաժնով, որտեղ սակայն տեղակայվեց հեղափոխության թանգարանը (նկ. 9): Վերջինս 1990-ական թթ. փակվեց և հավաքածուներն ու ցուցասրահներն անցան Հայաստանի պատմության թանգարանի ենթակայության ներքո:

Թանգարանի ձեռքբերումները 1970–1980-ական թթ.

1970–1980-ական թթ. թանգարանն ակադեմիական համակարգից կրկին անցավ նախարարության անմիջական ենթակայությանը, և առավելապես ընդգծվեցին ցուցահանդեսային, հանրահռչակման աշխատանքները: Ակադեմիկոս Մորուս Հասրաթյանի (1964–1975 թթ., նկ. 13), Բորիս Ղարիբյանի (1975–1982 թթ.), Տելեմակ Խաչատրյանի (1982–1987 թթ.) ղեկավարման տարիներին թանգարանն ակտիվ ցուցադրական գործունեություն սկսեց իրականացնել նաև արտերկրում: Նշանակալի հավաքածուներ ներկայացվեցին Լեհաստանում, Հունգարիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Էստոնիայում, Ուկրաինայում, Կանադայում, Ճապոնիայում, Իտալիայում (Ղարիբյան 1979, 7–8), իսկ 1980-ական թթ. թանգարանի տարեկան այցելուների քանակն անցավ 260.000-ից (Հաշվետվություն 1986, 9): Ակտիվ կապեր հաստատվեցին թանգարանի և սփյուռքահայ համայնքների միջև, բազմաթիվ նվիրաբերություններով համալրվեցին թանգարանի ազգագրական, դրամագիտական հավաքածուները (նկ. 14): Ցուցահանդեսային գործունեության առանցքում ներակայացվեցին այնպիսի կարևոր ազգային նշանակության թեմաներ, ինչպիսիք էին Հայոց ցեղասպանությունը և Արևմտյան Հայաստանից պահպանված մշակութային ժառանգությունը, հայկական գորգարվեստը և այլն (նկ. 12): Թանգարանը մասնաճյուղեր ստեղծեց երկրի տարբեր շրջաններում, իսկ թանգարանում սկսեց ակտիվորեն գործել թանգարանագիտական գիտամեթոդական կենտրոնը, որը երկրում թանգարանային գործի զարգացման ուղղությամբ զգալի աշխատանքներ իրականացրեց: 1970-ական թթ. թանգարանային համալիրի վերափոխման ու վերնահարկերի ավելացմանը զուգահեռ՝ մեծածավալ վերանորոգման ու մշտական ցուցադրության վերափոխման գործունեություն ծավալվեց, որի արդյունքում ընդլայնվեցին թանգարանի ցուցադրական տարածքները (ՀՊԹ արխիվ, ֆ. 1., ց. 2, գ. 135; 138; 142; 144; 145; 146; 147; 148; 149; 150) (նկ. 15):

Հայաստանի պատմության թանգարանը 1990–2020 թթ.

Հայաստանի անկախության վերականգնումից հետո թանգարանը, հաղթահարելով շատ դժվարություններ, հնարավորություն ստացավ փոխելու հարուստ հավաքածուների մեկնաբանությունը և մեծածավալ ցուցադրական գործունեություն իրականացրեց Հայաստանում և արտերկրում: 1990-ական թթ. նույնիսկ էներգետիկ ճգնաժամի, տնտեսական հիմնախնդիրների, պատերազմի պայմաններում թանգարանը երբեք չդադարեցրեց իր գործունեությունը (նկ. 16): Դեռ 1990-ական թթ. սկզբից աշխատանքներ տարվեցին հավաքածուների թվայնացման ուղղությամբ, ցուցահանդեսային և հավաքչական աշխատանքներ իրականացվեցին Հայաստանի առաջին հանրապետության, ազգային ազատագրական պայքարի պատմության ու այլ կարևոր համազգային թեմաների շրջանակներում: Աստիճանաբար առանձնացվեցին մասնաճյուղ-թանգարանները: Նորովի շարունակվեց թանգարանի միջազգային համագործակցությունը նորանկախ Հայաստանի զարգացող միջպետական կապերի ու մշակութային ժառանգության ուսումնասիրման ու ներկայացման նոր հնարավորությունների շրջանակներում: 1995 թ. թանգարա-

նի ավելի քան 200 ցուցանմուշներ ցուցադրվեցին Գերմանիայի Բոխում քաղաքում բացված «Հայաստան. մոռացված մշակույթի երկրի նոր հայտնագործում» մեծածավալ ցուցահանդեսում և նույն թվականին հրատարակվեց թանգարանի առաջին անգլերեն գունավոր պատկերագիրքը: 1997–2015 թթ. թանգարանը ղեկավարում էր թատերագետ Անելկա Գրիգորյանը (2015–2020 թթ.՝ կառավարման խորհրդի նախագահ, նկ. 18): 2000-ական թթ. «Լինսի» հիմնադրամի միջոցներով մեծածավալ վերանորոգում իրականացվեց, որին հաջորդեց մշտական և ժամանակավոր ցուցադրությունների նորովի կազմակերպումը: «Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակ», «Ֆրանսիայում Հայաստանի տարի», «Հայ գրատպության 500-ամյակ» պետական միջոցառումների շրջանակներում թանգարանը ակտիվ ցուցադրական աշխատանքներ իրականացրեց Հայաստանում և արտերկրում: Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությունը ներկայացնող ցուցահանդեսներ կազմակերպվեցին Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Մեծ Բրիտանիայում, Նիդերլանդների Թագավորությունում, Հունգարիայում, Ռուսաստանում, Սիրիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Հունաստանում, Իրանում (Treasures from the History Museum of Armenia 2019): Հատկապես խորհրդանշական էր թանգարանի ակտիվ մասնակցությամբ «Ֆրանսիայում Հայաստանի տարի» պետական ծրագրի շրջանակներում Լուվրի թանգարանում և Ֆրանսիայի այլ մշակութային հաստատություններում, ապա Հայաստանում կազմակերպված ցուցադրությունները (նկ. 17): Այս տարիների գործունեության արդյունքում գործընկերային կապեր ու երկարատև համագործակցություն հաստատվեց Ռուսաստանի պատմության պետական թանգարանի, Էրմիտաժի, Լուվրի թանգարանի, Բրիտանական թանգարանի, Նյու Յորքի Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի և այլ հեղինակավոր թանգարանների հետ: Թանգարանը, 2000-ական թթ. վերափոխելով իր մշտական ցուցադրությունը, ժամանակի հետ զարգացրեց հատկապես գիտահանրամատչելի գրականության հրատարակությունը, ուրույն հուշանվերային տեսականին, այցելուների սպասարկման պայմանները, համացանցային ներկայությունն ու ծառայությունները: 2019 թ. միջազգային գիտաժողովով թանգարանը տոնեց իր ստեղծման 100-ամյակը (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 151; 152; 370; 371; 372; 373; 456; 482; 553; 610; 611):

Թանգարանի գործունեությունը վերջին տարիներին

2020–2021 թթ. համավարակի և վերջին արցախյան պատերազմի ընթացքում թանգարանում ընթանում էին լայնածավալ արդիականացման աշխատանքներ. պետական ֆինանսավորմամբ սկսվել էր նոր օդափոխության ու ջերմախոնավային համակարգի անցկացման աշխատանքները, որի հետևանքով հիմնական ցուցադրական հատվածները փակվեցին: Սակայն, թանգարանը չդադարեցրեց իր գործունեությունը: Ավելին, նույնիսկ պատերազմի օրերին կազմակերպվեցին ցուցահանդես-բանախոսություններ, որոնցից մեկի շրջանակներում իր հուշանվերային սրերից մեկը թանգարանին նվիրաբերեց անվանի հայ հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանը (նկ. 19): Թանգարանը սկսեց հավաքել մարտերում զոհված զինծառայողներին պատկանող հուշային և վավերագրական իրեր՝ պաշտոնա-

կան համացանցային հարթակների միջոցով դիմելով նրանց ընտանիքներին ու հարազատներին («Հավերժի ճամփորդները»):

2021 թ. թանգարանում տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ, լուծարվեց կառավարման խորհուրդը, որը ստեղծվել էր 2015 թ., վերափոխվեցին բաժինները և ստեղծվեցին նոր բաժիններ: Թանգարանը սկսեց մշակել և իրականացնել տարբեր տարիքային լսարանների համար մշակված կրթական ծրագրեր: Նման առաջին փորձառություններից էին արտաքին գործերի նախարարության նախկին շենքում կազմակերպված «Դրվագներ ինքնության. տարազ» ցուցահանդեսի հիման վրա իրականացված կրթական ծրագրերը ու շաբաթական պարբերությամբ բանախոսություն-ցուցադրությունները: Անկախության 30-ամյակին նվիրված գիտաժողովով սկիզբ դրվեց ամենամյա հանրապետական ու միջազգային գիտաժողովների անցկացմանը և դրանց նյութերի հիմքով 40 տարվա ընդմիջումից հետո «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի» գիտական պարբերականի կանոնավոր վերաթողարկմանը (Աշխատություններ ՀՊԹ-ի):

2022 թ. թանգարանը նորովի կազմակերպված ժամանակավոր և մշտական ցուցադրություններով սկսեց վերաբացվել հանրության համար՝ ընթացող բարդ վերանորոգման աշխատանքներին զուգահեռ (նկ. 20): Համավարակից հետո առաջին մեծածավալ միջազգային ցուցահանդեսն իրականացվեց Նիդերլանդների Թագավորության Դրենց թանգարանում: «Արարատի հմայքի ներքո. գանձեր հին Հայաստանից» խորագրով և թանգարանի 160 առարկաներով կազմակերպված այս մեծածավալ ցուցահանդեսը բացվեց ՀՀ վարչապետի այցով ու անցկացված մրցույթով ճանաչվեց տարվա լավագույնը Նիդերլանդներում: 2022–2023 թթ. թանգարանը, որդեգրելով ակտիվ համագործակցության քաղաքականություն, կազմակերպեց մի շարք նաև համատեղ ցուցահանդեսներ՝ հյուրընկալելով այլ հավաքածուներ: Վերջիններիցս նշանակալի էր Ջեյմս Թուֆենքյանին պատկանող և 2023 թ. առաջին անգամ Հայաստանում ներկայացված 19-րդ դ. գորգերի ցուցադրությունը: Մեկ այլ ակտիվ գործունեության ուղղություն դարձավ թվային ցուցադրությունների և եռաչափ թվային շրջագայությունների պատրաստումը և ներկայացումը թանգարանի պաշտոնական ցանցակայքում (Հայաստանի պատմության թանգարանի կայք):

Թանգարանը, համագործակցելով տեղական և միջազգային հեղինակավոր գիտամշակութային կառույցների, գործընկերների հետ, վերջին երեք տարիներին 50-ից ավելի տարբեր ձևաչափերով ցուցադրություններ, 20-ից ավելի հրատարակություններ, 150-ից ավելի գիտական, մշակութային միջոցառումներ է իրականացրել: Թանգարանում հաշվառված է ավելի քան 400.000 թանգարանային առարկա: Հավաքածուն շարունակում է համալրվել հիմնականում հնագիտական պեղումների, նվիրատվությունների, գնումների միջոցով: Հատկապես արժանի են հիշատակման 2022 թ. Նոբելյան մրցանակի առաջին հայազգի դափնեկիր Արթեմ Փաթափությանի կողմից՝ իրեն շնորհված մեդալներից մեկի (նկ. 21) և առաջին հայ տիեզերագնաց Ջեյմս Բաղյանի կողմից՝ իր անվանական տարբերանշանի նվիրաբերությունները թանգարանին:

Այսօր էլ համատեղ ցուցահանդեսների կազմակերպման աշխատանքներ են տարվում այնպիսի հեղինակավոր թանգարանների հետ, ինչպիսիք են Լուվրը, Բրիտանական թանգարանը, Չինաստանի ազգային թանգարանը, Պրահայի ազգային թանգարանը, Բեռլինի հնագույն և հին ժամանակների պատմության թանգարանը, Ֆրանսիայի հնագիտության ազգային թանգարանը և այլն: Թանգարանի 105-ամյա գործունեության ձեռքբերումներից է 2024 թ. Բրիտանական թանգարանից առաջին անգամ Հայաստան բերված Անահիտ աստվածուհուն վերագրվող բրոնզե արձանի գլխի և ձեռքի ցուցադրումը թանգարանի հարուստ հավաքածուներից մի ընտրանու հետ՝ «Մայր Աստվածություն. Անահիտից Մարիամ» խորագրի ներքո, որով սկիզբ է դրվում նաև նման հայտնի թանգարաններից ցուցանմուշների փոխառմանն ու համադրված բարձրակարգ ցուցահանդեսների կազմակերպմանը (նկ. 22–23):

Ամփոփում

2024 թ. լրացավ Հայաստանի պատմության թանգարանի հիմնադրման 105 և թանգարանի հիմնադիր ղեկավարի՝ Երվանդ Լալայանի 160-ամյակները, որոնք կարևոր առիթ են թանգարանի անցած ուղու հետահայաց արժևորման համար: Նման համառոտ անդրադարձն իսկ թույլ է տալիս հետևյալ եզրահանգումներն անելու.

- Հայաստանի պատմության թանգարանը հիմնվեց՝ որպես ազգային թանգարան՝ մարմնավորելով հայկական նորաստեղծ պետականության շուրջ հայ մտավորականության համախմբման և պատմամշակութային ժառանգության փրկության ժամանակի հրամայականներն ու պետական քաղաքականությունը: Եթե 1920-ական թթ. մի շարք անվանի գործիչների ջանքերի շնորհիվ ազգային թանգարանը հաջողությամբ ձևավորեց իր հիմնական բաժինները և հավաքածուները, բացվեց հանրության համար և ցուցադրական գործունեություն ծավալեց, ապա 1930-ական թթ. առաջին կեսին իրականացված վերափոխումների արդյունքում այն արհեստական բաժանումների ենթարկվեց իր հիմնական կառույցում:
- 1940–1960-ական թթ. ակադեմիական համակարգում թանգարանը դարձավ առաջատար գիտամշակութային կառույց: Հնագիտական սիստեմատիկ պեղումների, ազգագրական ուսումնասիրությունների հենքով համալրելով իր հավաքածուները՝ թանգարանը երկրում զարգացրեց թանգարանային գործի մասնագիտական հիմքերը:
- 1970–1980-ական թթ. թանգարանը երկրի ամենաակտիվ մշակութային կառույցներից էր՝ ակտիվ գործունեություն իրականացնելով նաև արտերկրում: Այս շրջանում գրանցվեցին թանգարանի ամենաշատ այցելությունները, ինչպես նաև հավաքածուների նվիրաբերությունները, հատկապես սփյուռքահայ համայնքներից: Մեծաքանակ ցուցադրություններից, մշակութային միջոցառումներից զատ, թանգարանը մեթոդական կենտրոնի դեր ուներ երկրում պատմական թանգարանների ստեղծման ու զարգացման գործում:

- Հետխորհրդային տարիներին թանգարանը, բախվելով մի շարք հիմնախնդիրների, երբևէ չդադարեցրեց իր գործունեությունը, այլ նոր հնարավորություն ստացավ իր գործունեությունն իրականացնելու անկախ պետականության պայմաններում: Նորանկախ Հայաստանի զարգացող միջպետական կապերի ու մշակութային ժառանգության ուսումնասիրման ու ներկայացման նոր հնարավորությունների շրջանակներում թանգարանը բազմաթիվ նոր ցուցադրություններ կազմակերպեց տարբեր երկրներում:
- Վերջին տարիներին թանգարանը շարունակում է պահպանել լավագույն մասնագիտական ավանդույթներն ու անցյալի դրական փորձառությունը՝ միաժամանակ իր գործունեությունը հնարավորինս համապատասխանեցնելով միջազգային առաջավոր չափանիշներին: Հատկապես նոր ձեռքբերում կարելի է համարել արտերկրյա հեղինակավոր թանգարաններից փոխառված ցուցանմուշների ու թանգարանի հարուստ հավաքածուների համադրությամբ ստեղծվող միջազգային ցուցահանդեսները Հայաստանի պատմության թանգարանում:

Այսպիսով, Հայաստանի պատմության թանգարանի ավելի քան մեկդարյա գործունեությունը նվիրումի, հայրենասիրության, մասնագիտական սխրանքի մի վառ օրինակ է, որը մշտապես նոր եռանդ ու ներշնչանք է հաղորդելու բոլոր նրանց, ովքեր կշարունակեն թանգարանում պահվող համամարդկային նշանակության մշակութային ժառանգության պահպանման ու սերունդներին ավանդման ամենօրյա ջանադիր աշխատանքը և նոր զարգացման մակարդակի կբարձրացնեն իրենց վստահված պատասխանատու առաքելության իրականացումը:

Թանգարանի անվանումները և ղեկավարները

«Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան» 1919–1920 թթ.
«Ազգային թանգարան» 1921–1922 թթ.

«Հայաստանի պետական կենտրոնական թանգարան» 1922–1930 թթ.
վարիչներ
1. Երվանդ Լալայան (1919–1927 թթ.)
2. Երվանդ Շահազիզ (1927–1928 թթ.)
3. Ռուբեն Դրամբյան (1928–1932 թթ.)

«Կուլտուր-պատմական թանգարան» 1932–1935 թթ.
տնօրեններ՝
4. Վազգեն Չալոյան (1932–1933 թթ.)
5. Սոֆիկ Գրիգորյան (1933 թ.)
6. Վաղարշակ Նորենց (1933–1934 թթ.)
7. Մնար Մնարյան (1934–1935 թթ.)

«ՀԽՍՀ պետական պատմական թանգարան» 1935–1940 թթ.
տնօրեններ՝
8. Հակոբ Ջորյան (1935–1937 թթ.)
9. Սերոբ Պողոսյան (1937–1940 թթ.)

«Հայաստանի պատմության պետական թանգարան» 1941–2002 թթ.
տնօրեններ՝
10. Կարո Ղաֆադարյան (1940–1964 թթ.)
11. Մորուս Հասրաթյան (1964–1975 թթ.)
12. Բորիս Ղարիբյան (1975–1982 թթ.)
13. Տելեմակ Խաչատրյան (1982–1987 թթ.)
14. Ռաֆիկ Վարդանյան (1988–1991 թթ.)
15. Ալֆրեդ Շահնազարյան (1991–1997 թթ.)
«Հայաստանի պատմության թանգարան» 2002–2024 թթ.
տնօրեններ՝
16. Անելկա Գրիգորյան (1997–2015 թթ.)
17. Գրիգոր Գրիգորյան (2015–2020 թթ.)
18. Դավիթ Պողոսյան (2020 թ. –)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1986 – Հաշվետվություն Հայաստանի պատմության պետական թանգարանի 1986 թ. կատարած աշխատանքների, ՀՊԹ արխիվ ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 149:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 214; 216, 218; 220; 222; 227; 231; 234; 241; 244; 249; 255; 258; 261; 264; 268; 271; 275; 278:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 42:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 53 – Պատմական ակնարկ, ՀՊԹ արխիվ, ֆ.1, ց.1., գ. 53, 1–16:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 135; 138; 142; 144; 145; 146; 147; 148; 149; 150:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 151; 152; 370; 371; 372; 373; 456; 482; 553; 610; 611:

Գրականություն

ՂԱՐԻԲՅԱՆ 1979 – Ղարիբյան Բ., Հանրապետության մայր թանգարանը, *Կուլտուր-լուսավորական աշխատանք*, 1979, №3, 4–9:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1948 – Ղաֆադարյան Կ. Գ., Խմբագրի կողմից, *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, Երևան 1948, հատոր 1, 5–7:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1948 – Ղաֆադարյան Կ. Գ., Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, Երևան, 1948, հատոր 1, 9–65:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1961 – Ղաֆադարյան Կ. Գ., *Ուղեցույց Հայաստանի պատմության պետական թանգարանի*, Երևան, 1961:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1974 – Ղաֆադարյան Կ. Գ., Սովետական Հայաստանի առաջին թանգարանը, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 1974, № 12, 37–47:

ՇԱՀԻՆՅԱՆ 1919 – Շահինյան Գ., Հայ արվեստագէտների նկարահանդէսը Երեվանում, *«Հայաստանի աշխատավոր»*, 1919, № 64, 6-ը հունիսի, 2: Տես նաև՝ 1919, № 66, 8-ը հունիսի, 2 և 1919, №69, 12-ը հունիսի, 1:

ՊՈՂՈՍՅԱՆ 2021 – Պողոսյան Դ.Ա., «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի». նախաբանի փոխարեն, *Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի*, Երևան, 2021, հատոր 8, 9–12:

ՍԻՄՈՆՅԱՆ 1991 – Սիմոնյան Ա., *«Թանգարանաշինությունը Խորհրդային Հայաստանում /1920–1935թթ./»*, դիսերտացիա պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու համար, ձեռագրի իրավունքով, Երևան, 1991, 53–64:

ՕՐԵՆՔ՝ ԱՊԱԳԱ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԻՐԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 1919 – Օրենք՝ ապագա ազգային թանգարանի համար գեղարվեստական իրեր ձեռք բերելու նպատակով 100 000 Ռ. վարկ հատկացնելու մասին, 07.07.1919, *Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920թթ.),* կազմ. ՝ Ս. Միրզոյան, Մ. Ավետիսյան, Ջ. Հովհաննիսյան, Ա. Չիլինգարյան, Երևան, 1998, 127–128:

ՕՐԵՆՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԳՐԱԴԱՐԱՆ ՀԻՄՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 1919 – Օրենք՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում Ազգագրական-մարդաբանական թանգարան-գրադարան հիմնելու մասին, 09.09.1919, *Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918–1920թթ.),* կազմ. ՝ Ս. Միրզոյան, Մ. Ավետիսյան, Ջ. Հովհաննիսյան, Ա. Չիլինգարյան, Երևան, 1998, 171:

TREASURES FROM THE HISTORY MUSEUM OF ARMENIA 2019 – *Treasures from the History Museum of Armenia,* book-catalogue, gen. ed. A. Grigoryan, Yerevan, 2019, 243–245.

Էլեկտրոնային նյութեր

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՊԹ-ի – «Աշխատություններ ՀՊԹ-ի», Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայք, 02.03.2025, https://historymuseum.am/education-cat/educ-works/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿԱՅՔ – Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայքի «առցանց շրջայց» և «առցանց ցուցահանդես» հատվածները, 02.03. 2025, https://historymuseum.am/:

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐԸ – «Հավերժի ճամփորդները. անուններ, պատմություններ և երազանքներ, որոնք մեզ հետ են» առցանց ցուցահանդես, Հայաստանի պատմության թանգարանի պաշտոնական կայք, 02.03.2025, https://shorturl.at/cRfyE:

Davit Poghosyan
Candidate of Pedagogical Sciences,
Associate professor,

Director of the History Museum of Armenia
d.poghosyan.historymuseum@gmail.com

HISTORY MUSEUM OF ARMENIA: OUTLINES OF MORE THAN A CENTURY OF DEDICATION

Keywords: History Museum of Armenia, national museum, Yervand Lalayan, Karo Ghafadaryan, exhibitions, collections, museum studies

Foundation of the History Museum of Armenia was one of the most important achievements of the modern Armenian statehood. The museum, established in the heart of Yerevan during the years of the First Republic of Armenia and still operating at its founding site, has been a center for the collection, preservation, study, exhibition and presentation of the historical and cultural heritage of Armenia for more than one hundred and five years. It has always been a symbol of the unity of the intellectuals, their efforts and dedication, as well as the basis for the implementation of the museum policy of developing in the country. The article attempts to briefly summarize the history of the museum for the first time, emphasizing the most important aspects and achievements of its activities in different periods. The 105th anniversary of the museum and the 160th anniversary of its

founding director Yervand Lalayan are important occasion for retrospective reflection of the pathway and experience of the museum.

Давид Погосян
Кандидат педагогических наук, доцент

Директор Музея истории Армении
d.poghosyan.historymuseum@gmail.com

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ: ОЧЕРТАНИИ БОЛЕЕ ЧЕМ СТОЛЕТНЕГО ПОСВЯЩЕНИЯ

Ключевые слова: Музей истории Армении, национальный музей, Ерванд Лалаян, Каро Кафадарян, выставки, коллекции, музейное дело

Создание Музея истории Армении стало одним из важнейших достижений современной армянской государственности. Музей, основанный в самом центре Еревана в годы Первой Республики Армения и действующий по сей день на своем первоначальном месте, уже более ста пяти лет является центром сбора, сохранения, изучения, экспонирования и презентации исторического и культурного наследия Армении. Он всегда был символом интеллектуального сообщества, его единства, усилий и самоотверженности, а также основой для реализации политики развития музейного дела в стране. В статье впервые предпринята попытка кратко изложить историю музея, подчеркнув наиболее важные стороны и достижения его деятельности в разные периоды. 105-летие музея и 160-летие со дня рождения его основателя Ерванда Лалаяна являются важным поводом для ретроспективного осмысления пути и опыта музея.